ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE04-734C-4538-93EC հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ԵԴ2/7645/02/25

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քաղաքացիական գործը վարույթ ընդունելու մասին

16 հունիսի 2026թ.

ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով թիվ ԵԴ2/7645/02/25 քաղաքացիական գործն ըստ հայցի «ԱՍ-777» ՍՊ ընկերությունն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ գնահատող հանձնաժողովի 17.07.2025թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «ԱՍ-777» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ԱՍ-777» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2025թ. հուլիսի 22-ին

հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ գնահատող հանձնաժողովի 17.07.2025թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «ԱՍ-777» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը Դատարանի (դատավոր Ռ. Բունիաթյան) 2025թ. հուլիսի 24-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատարանի (դատավոր Ռ. Բունիաթյան) 2025թ. օգոստոսի 20-ի վճռով հայցը բավարարվել է:

Վճիռը Պատասխանողի ներկայացուցչի կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր Լ. Գրիգորյան) 2026թ. մարտի 12-ի որոշմամբ թիվ ԵԴ2/7645/02/25 քաղաքացիական գործով Դատարանի (դատավոր Ռ. Բունիաթյան) 2025թ. օգոստոսի 20-ի վճիռը բեկանվել է և քաղաքացիական գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Էլեկտրոնային եղանակով վարվող թիվ ԵԴ2/7645/02/25 քաղաքացիական գործը դատավոր Գ.Վարդանյանին մակագրվել է 2026թ. հունիսի 12-ին, իսկ հասանելի է դարձել 2026թ. հունիսի 15-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ըստ հայցի «ԱՍ-777» ՍՊ ընկերությունն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ գնահատող հանձնաժողովի 17.07.2025թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «ԱՍ-777» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, թիվ ԵԴ2/7645/02/25 քաղաքացիական գործն ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ2/7645/02/25 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026թ. հուլիսի 17-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2026.06.16 16:55:45 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am